

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՈՂԻՐԷ, Ապրիլի փողոց

ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈԹՈՒԹՅՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՐՁ. ողջ.
ՄԷԿ անգամի առաջին ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱՌԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐՈՍԱՆ ԶԱՄԱՐ

Տարեկան	ՂՐՁ. ողջ	100
Վերջին համար	»	35
Երեսմսայ	»	30


ՕՏԻՐ ԵՐԱՐՈՐՈՒՄԻ ԶԱՄԱՐ

Տարեկան	ՁՐ. 26
Վերջին համար	» 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՄԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն—Խմբագիր Յ.ՄԱՊԻԱՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՓԱՅՍ ՏԱՏԵԱՆ

Երեկ ստացուած Պոլսոյ հայ թերթերը մեծ գոյժ մը կը բերեն հետեւին:

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան խորհրդական ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ ՏԱՏԵԱՆ մեռեր է ամսոյ 7/20ին կիրակի օր, իր բնակարանին մէջ Ի ՇԻՂԻ:

Յարութիւն փաշայի մահը անախճալ գէպը մը չէ բանի որ երկու ամսէ ի վեր անկողնոյ կը ծառայէր ան, և չարթէ չարթ մեր ստացած լուրերը երթալով ծանր հանգամանք մը կուտային անոր հիւանդութեան:

Այս կորուստը դառն է Հայ ազգին համար որովհետեւ Յարութիւն փաշայի մահուամբ կը վերջանայ շարքը այն ականաւոր պետական անձնաւորութիւններու որոնցմով հայութիւնը իրաւունք կունենար պարծենալու:

Նուազար փաշայէն ետքը ամենէն մեծ կորուստն է որ ազգը ըրած ըլլայ այս վերջի քանի մը տարիներուն մէջ:

«Փարոս»ի ծաւալը չի ներեր ընդարձակօրէն տալ հանգուցելոյն կենսագրութիւնը որ մէկէ աւելի շահեկան կէտեր կը պարունակէ իր մէջ, պիտի բաւականանանք ուրեմն բանի մը կենսագրական նօթերով, կատարած ըլլալու համար պարտականութիւնը հայ թերթի մը որ վեր է ամեն կանխակալ համագործակցութեան, և չի պատկանիր ժողովրդեան այն մասին որ անպատճառ սե մուր մը քսելու ուխտը ըրած է պետական տղ մեծ մարդուն ճակտին:

Յարութիւն փաշա որդին էր մեծ վառօդապետ Տատեան Յովհաննէս պէյի և ծնած էր 1826ին Ապրիլ ամսոյ սկիզբները Այ-Սթեփանօյի մէջ:

Երեք եղբայրներ ունեցած է՝ Առաքել, Ներսէս և Գրիգոր պէյերը, երեքն ալ մեծ կարգացումի տէր անձնաւորութիւններ և որոնք նշանաւոր դէմքեր եղած են իրենց կարգին,

ճարտարագործութեան և արուեստներու աշխարհին մէջ:

Քսանը մէկ տարեկան եղած ատեն, նը հայրը Եւրոպա զբոսելու գնաց, Բարիդի Սէնթ-Պարալ բոլէժին մէջ աշակերտած և չորս տարի ետքը զիտութեանց պատկաւորի վկայականով Պոլիս վերադարձած է և, 1853ին Արտաքին գործոց պաշտօնատան մէջ մտած է իբրեւ բարտուղար-թարգման:

Յրանսերէնի մէջ իր ունեցած հըմտութիւնը առաւի կարգ անցած էր, և քիչ Հայեր կրցած են իրեն հաւատարիլ ինչպէս Նուազար փաշա, Ստեփան Ոսկան, Տօք. Մարկոսօֆ և ուրիշ մէկ քանիներ:

Ճիշդ 40 տարի կառավարական զանազան պաշտօններ վարած է ուրիշ վերջինները եղած են իրտաքին գործոց նախարարութեան խորհրդականութիւնը և Պետական խորհրդոյ անդամակցութիւնը:

Իր զիւանազիտական կարողութեան վրայ զգաւար մը ունենալու համար բաւական է մտածել թէ հակառակ վերջի քառօրէ դարու միջոցին թուրքիոյ մէջ տեղի ունեցած խել մը խիստ կարեւոր դէպքերուն, հակառակ Սուլթանին հրէշային քաղաքականութեան: և մանաւանդ հակառակ իր Հայ մը եղած ըլլալուն, Յարութիւն փաշա միշտ պահած է իր կարեւոր պաշտօնը զոր կատարելու համար այսուհետեւ թերեւ թ. Դրան համար դիւրին չըլլայ մէկը գտնել:

Իբրեւ զիւանազէտ մեծ համբաւ ստացած էր նոյն իսկ Եւրոպոյ մէջ և միջազգային զիւանազիտութիւնը յարգանք կը յիշատակէր իր անունը:

Քառասուն տարուան մէջ իր ասպարէզին ամեն աստիճաններէն անցած էր և հասած էր այն կէտին ուրիշ անգին անցնիլ կարելի չէ Տաճկաստանի ծառայութեան մէջ զբաղուող Հայու մը համար:

Յարութիւն փաշա վէզիրութեան աստիճանը ունէր ինչպէս նաեւ Իֆթիխարի, Օսմանիէի, Մէճիտիէի ականակալ պատուանշանները:

Պատը Տէրութեանց կողմէ ստացած էր հետեւեւ պատուանշանները. Սպանիա՝ «Իզապէլ Լա Քաթոլիք»:

Շուէտ՝ «Էթուալ Բօլէր»։ Գերմանիա՝ «Բրուսիական Թագ»։ Իտալիա՝ «Բուրոն տ'Իթալի»։ Պարսկաստան՝ «Արեգակ և Առիւծ»։ Պապը՝ «Պիոս Թ»։ Ռուսիա՝ «Սէն Սիմոնիսկայ»։ Ռումանիա՝ «Ռումանական Թագ»։ Սերպիա՝ «Թագովո»։ Բուլղարիա՝ «Ս. Փրկիչ»։ Սեւ Լեւ «Տանիլո»։ Ֆրանսա՝ «Պատուոյ Լէգէոն», և վէնէցուէլլա՝ «Արժանիք»:

Իր անհատականութեան մէջ Յարութիւն փաշա Տատեան ճշմարիտ քրիստոնեայի, ազնիւ, բարեկիրթ, և մարդասէր մարդու տիպարն էր այս բառերուն ամենէն ընդարձակ իմաստով:

Կրօնասէր ինչպէս ոչ որ, ազգատասէր պէտք եղածէն աւելի, պարկեշտ քննադատելի ըլլալու աստիճան, անձնուրաց որքան ներքի չէ ըլլալ, ահա չորս բառով պատկերը այն մարդուն որ հարուստ ծնած և ամենէն բարձր աստիճաններու հասնելէն ետքը, ոչ թէ ազգատ ալ պարտքի տակ կը մեռնի. և այս պարագան միայն կը ցուցնէ իր անշահախնդիր նկարագրին մեծութիւնը:

Իբրեւ Հայ՝ Յարութիւն փաշա այնքան անբասիր կեանք մը ունեցած է որքան իբրեւ պարզ անհատ:

Հակառակ տեսակ մը թերթերու մտածելու և տեսնալու եղանակին, այդ խելացի, բարի և ազնիւ մարդը չէր կրնար, բնական օրինօր, ըլլալ այն սե հոգին որպէս ճանչնալ կուգէին մեր յեղափոխական ախպարները: Իրենց յանցանքը տոբ և անոր վրայ բռնցներու, և իրենց մեղքերը թեթեւեղելու գիտումով առ ան զբաղարտելու զիւանազիտութիւնը աշխարհիս չափ հին է և չի՞ր զարմանար բայց միայն մեծ ցու կը գտնուէր, երբ կը անսինքն թէ այդ բարձր մարդուն կը վերագրեն ցածութիւններ զորս էն յետինը հայերուն չպիտի ուզէր ընել:

Յարութիւն փաշա ազնուական Հայ մը ըլլալէ աւելի՝ Տատեան մըն էր որոնց ազգասիրութիւնը կասկածի տակ չեն կրնար թողուլ մտաւարանութիւններ իսկ մը թունաւոր թերթերուն:

Եւ յետոյ ժամանակներ կան ուր չի՞ր զիւանազիտութիւնը հերոսութիւններ կ'ար-

ժէ: Պատմութիւնը թերեւ ցուցնէ թէ հանգուցեալ փաշան այդ հերոսներէն էր:

Նոյն իսկ եթէ իբրեւ պաշտօնային ունեցաւ թերութիւններ ազգին շահերուն տեսակէտով, պէտք չէ սակայն մոռնալ թէ խելացի թերութիւնները անխելք քաջութիւններէ աւելի օգտակար են:

ՄԻՒՍԻԻ ՍԻՍԱԿ

ՀԱՅ ԾԱՆՈՒԹԵՐՈՒՆ

(Շար. Յախորդ թիւէն և վերջ)

Տարիներ անցեր էր, և Միւսի Սիսակ ոչ այդ աղջիկը աներ էր և ոչ ալ ուրիշ մը: Փեսացու էր և կը մնար անստան:

— Ատ աղջիկը տան նէ կ'անհետ, առանց «թրախօմայի», ըսելով, տունէ տուն կը պտտէր:

Ընտանիքներ իրարու ձեռքէ կը խլէին զայն որտե մը պէս, կարծելով թէ իրենց պիտի յաջողին զայն կղզի: Իրարու աղէկ վար կը դարձնէին, սուտ կամ իրաւունք պահողներով կը բռնաւորէին, կը խնդային յուսալիւ երբ Միւսի Սիսակը տեղէ մը պաղեցնելով իրենց տունը կը քաշէին. և խնդանին փորեղին կը մնար: Միւսի Սիսակ՝ իրենց աղջկանը վրայ ունէ պակասութիւն մը գտնալով՝ ուրիշ մը առնելու կ'երթար «թրախօմայի»: Համ կ'առնէր կոր աս բանէն. ինչո՞ւ չի շարունակէր: Ինչո՞ւ չի շահագործէր աղջկին անպատճառ կարգելու տենդէն բռնուած ծնողքներուն շահախնդիր միամտութիւնը: Շնորհիւ իր ամուսնական թեկնածութեան, ամենուրեք մեծարանք, իրաւ իզգիթ, իրեն ի պատիւ սարքուած ճաշեր, երկօրյաներ, աղջիկներու հետ անմեղ կամ մեղաւոր սիրաբանութիւն, ձեռքէ ձեռք քաշուիլ, «ձեռքի վրայ բռնուիլ», ինքզինքը կէտ նպատակի զգալ այդքան տենդու իղձերու, աղքատ յուզմանց աղբիւր և նշանաւորութեան թիւրախ, ինքզինքը վիճակահանութեան «մեծ թիւը» զգալ առաջի բազմաթիւ շահադիտութիւններու երթարկուած, ասոնք պզտիկ օգուտներ, պզտիկ հաճոյքներ, անպատուութեան պզտիկ գոհացումներ կ'ընէին...

Միւսի Սիսակ այնքան գոհ էր ինքզինքէն, իր աս կեանքի զրոյթներէն՝ որ վարդապետութիւն կը հանէր անիւ, և ճշմարտութիւնը գտած ըլլալ կարծօյ փիլիսոփայի մը պէս որ հանգիստ չէր մինչև որ զայն ուրիշներուն չի հաղորդէ: Կը քարո-

Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԻԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐՈՒ. ԳՈՂԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ

զէր իր բարեկամներուն զանոնք ալ իր երջանկութեան բաղդակից ընկու բարեխիղճ հոգածութեամբ. և զուարճաբան յուշընդով մը աւելցած աւետարանական պատուելի մը բարեպաշտօն եռանդովը:

«Ամէն ամէն ասեմ ձեզ, փեսայ մի ըլլաք առանց երկար ատեն փեսացու մնալու. մարդ փեսայ երբ է նէ կ'ըլլայ, բայց փեսացու ոչ ամէն ատեն. մէկ մը որ փեսայ եղար, կրնաս ալ փեսացու ըլլալ. կնիկն ալ ուտելիքի կը նմանի. ամէն աեղ կը պտտիմ, կը նայիմ, կը քննեմ, կը հոտուրտամ, համը կը նայիմ, քն աղէկը ուր որ գտնամ, կ'առնեմ»:

Իւ անոնց որ իրեն մտերմաբար կ'ընէին՝ —Եղբայր ա' ճերիք է, չի կարգորիս, միաբը ինչ է. կը պատասխանէր ընդունը շահականօրէն խղճեցելով, ինչ որ նուրբ հրճուանքի նշան է կարգ մը խառնուածքներու քով:

—Բարեկամ, ես հիմա մեղեցեմի՞նչ կ'ըլլամ կոր, ախորժակս բանալու համար, կերակուրը ետքը պիտի ուտեմ:

Այսպէս կ'երթար Միսիւ Սիսակը: Իր գեղազուարճ ճամբուն վրայ՝ որ ամէն զարձուածքի սիրուն անակնկալներու կը հանդիպէր՝ յայտն կը ծնէին ու կը մոռնէին, իր քայլերուն տակ՝ թունդ ելած սիրտեր կ'արժնէին, աղջկան ծաղկեայ պատիւներ կը կոխկոտուէին, ցեխին ու ցախին կը խառնուէին, իր ետին նախանձութիւններ, մրցակցութիւններ, սիրեր կը խոնուէին, կը խոտանային հեռոտ դատասկներու պէս, մօր անձններ —այրած սրտի սև մուկ— կը դիզուէին ամպակուտակ, և ինք՝ իր վաշտուչ հասակը ցցած՝ նուրբ գաւազանը ձեռքը և պիտեքը ոլորուն՝ աղուոր ու շիք փեսացուի դերին յաղթանակներ խելով աջէն ու ձախէ՝ կը շարունակէր իր ճամբան: Թող կուտային որ շարունակէր:

Գիտէք ուր գնաց յանգեցաւ այսքան պատարասած մէկու մը փեսացուական ասպարէզը: Պատմութիւնը հոյակաւոր է գեղին մէջ. և մինչև հիմա կնիկները ամէն առթիւ կը խօսին այդ դէպքին վրայ՝ նկատելով զայն իբր «Աստուծոյ մէկ գործը», նախախնամական պատուհաս մը, Միսիւ Սիսակին նմաններուն համար դաս մը: Միսիւ Սիսակը, տիպար փեսացուն, ոչ մէկ աղջկան չի հաւնողը, 3-4 տարի կին փնտող և չի գտնող մարդը գացեր առեր էր Չամաշքերի Նունիկին աղջկը: —Ո՛ր, ո՞ւր «էտեպսիդ» Նունիկին աղջկը, Հոռօփը... Այո՛ւ: Ինչպէս: Շատ պարզ կերպով: Աս Նունիկը Միսիւ Սիսակին լաթե-

րը կը լուայ եղեր. աս առիթով՝ մեր փեսացուն ալ անոր տունը կուգայ կ'երթայ եղեր. կ'երեայ թէ աղջկանը գեղջուկ հրապոյրներուն պարունելով՝ հետը զուարճանալու գեր է, ըստ իր բարի սովորութեան: Մայրը —«Զօրեղուն քօրէք կնիկ մի— աղջկը, լիբտած ու վարպետորդի, խօսք մէկ կ'ընեն և կը քաջաբեմ Միսիւ Սիսակը թողարտու քաղաքականութեամբ: Բնականաբար մեր Միսիւ Սիսակին միտքը Հոռօփը առնել չէր առնաց «Թրախօմայի». այլ՝ հետը ինչալ ելլալ: Անանկ մը ինչալ սակայն որ չի կրցաւ ա' ոտքի ելլալ: Չամաշքերի Նունիկը այն կնիքներէն էր զոր ժողովրդական բառարանը «աֆօռօզ» անուանելով կը մկրտէ: Թարմար վայրկեանի՝ աղջկան մայրը մեծ ձայն մըն է կը բարձրացնէ, անիրաւուած ու կատարած ամբօխի մը բոլոր վայնասունը, վոհմակի մը պոռչատուքը, իր աղջկան պատիւը պաշտպանող, մարքագործել ուզող արի ու անակոտոր մօր մը կեցուածքին մէջ անառիկ ու յարձակողական: Ասկին անդին կ'իյնայ, գեղին բոլոր դուռները ափ կ'առնէ, պոռչ—կանչներով, արցունքներով, հայհոյութիւններով, անձններով կը պատմէ գայթակղութիւնը, աղջկան վիշաք, յուսահատ «վիճակը»... Առաջնորդարան, թաղական խորհուրդ, Պատրիարքարան, «Առիւթ» իրար կ'անցունէ. կամ աղջկին կ'առնէ, կամ 300 ոսկի ճէզու և «այսչափ տարի» բանաւ... Աղջկան երկաթագործ եղբայրը՝ Տէլի Համբիկը՝ կ'սպասուայ Միսիւ Սիսակին՝ գաղտնի հարուածով մը —մէկ, եղբայր չէ— շահ ստակ հանել զինքը եթէ քոյրը չ'առնէ: Բաց ատի՛ Միսիւ Սիսակ ամբողջ գեղը իրեն գէմ զինուած տեսաւ. «Սա սրկան նայէ... մէկ մըն ալ կարգուելու ելեր է...» Մէկ քանի տեղերէ խայտառակաբար վռնտուցաւ: Խեղճը՝ մինչև այն ատեն իսպալ խնդալու վարժուած՝ մէկէն անդունդը տեսաւ իր ոտքերուն տակ, բերանը բաց, զինքը կ'ընէր պատրաստ: Եւ դեռ ինքզինքը գտնելու ատեն չ'ունեցած՝ լախտի այդ հարուածին ապշուածիւնը դեռ չ'անցած՝ ինքզինքը կարգուած տեսաւ Չամաշքերի Նունիկին աղջկանը Հոռօփին հետ: Գնա՛ մեղի, Միսակ... ասանկ պիտի վերջանար քու փառաւոր փեսացուութիւնդ, «չամաշք»ի տաշտի մը, լուացքի աղտոտ ջուրերու մէջ պիտի լընճուէր ասանկ... —Ամեն մարդու հետ ինչալ չ'ըլլար, յայտարարեք էր յաղթական Նունիկ Տուտուն, որ ալ կը քաշուէր լուացարարութենէն: Սիսակ օր մը չի կրցաւ մնալ գեղը՝ և գնաց Պոլսոյ մէկ մարցուած անկիւնը՝ Անատուրը:

—Ամեն մարդու հետ ինչալ չ'ըլլար, յայտարարեք էր յաղթական Նունիկ Տուտուն, որ ալ կը քաշուէր լուացարարութենէն: Սիսակ օր մը չի կրցաւ մնալ գեղը՝ և գնաց Պոլսոյ մէկ մարցուած անկիւնը՝ Անատուրը:

այդ պարագան է որ իրաց վիճակը ահագին կերպով կը կնճռուէ:

—Տգեղ կամ աղուոր ըլլալս իրենց ինչ, բաւական է որ պարտականութիւնս կը կատարեմ:

«Ժպտեցաւ:

—Գոնէ կը խոստանա՞ք ինձ որ ի հարկին ինձ դիմէք:

«Խոստացայ, և զատուեցանք:

«Արդ, Մարտի, ինչ որ ալ ըլլայ, այդ մարդը ինձի երկիւղ կը ներշնչէ —չունիմ իր վրայ այն փտահուրթեան զոր կ'ուզէի, —կարծես նախադասութիւն մը ունիմ որ իր յայտարարութիւնները կեղծ են, և ինքզինքս կը մեղադրեմ:

«Ա՛հ, սիրելի եղբայրս, ո՛րչափ պէտք ունիլ քեզի, քու խրատներովդ, քու ազնիւ ու այնչափ անյողողող ազգայապաշտելի, գրէ ինձի, այս ամէն բաներուն վրայ ըսէ

Հիսարի բարձունքին ոտքը՝ թաղել թաղուցանել իր կեանքին ամօթն ու խղիւղութիւնը:

Իսկ գեղը՝ զոր 3—4 ասլ: շարունակ հարստահարեք էր՝ անսահման ուրախութեամբ մը խայտաց. գեղին վրէժը լուծուած էր: Մարքերուն և նախնիներուն անձնքը բռներ էր. «Աստուած գիտէ տուած պէք—տուած...»: Աղջկանց ու՛խերը օ՛խի փոխուեցան: Լիզուները քակուեցան «յալի—իւր՛ն շուն, սրկայ, անամօթ, հիմակ գըտա՛մ ուզած աղջկիդ... մեր ալլըման աղջկներուն չի հաւնեցա՛ր հէ...»: Միսիւ Սիսակին շնորհիւ իրարու թշնամացած ընտանիքներ հաշտուեցան հանգիստաւոր առիթովը հասարակաց շարագործին պատահած այս զոհադուլութեան որ միմիջարանը ու զովութիւն կը բերէր «երած սրտեր»ու:

Բայց է՛ն նշանաւոր խօսքը թագուկ Տուտուն ըսաւ, եօթնասուննոց պատու մը, մարդ ու մարմնով գեռ առողջ մնացած:

—Թող երթայ տէ՛ մեղքերը յամաշքերի զորանչին «վալ» տայ, սեկերսը:

Մ. Ս. ԿԻՐՈՅԵԱՆ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ՀԱՄԱՏԱՓՈԹԻՒԹԻՒՆ.— Կ. Պոլսէն ամսոյս 20 թուականաւ «Ֆիկարօ»ի քաշուած հեռագիր մը կըսէ թէ Մուշի մէջ երկու հազար հայեր տեղւոյն ուսական փոխհրապարտին զիմելով փափաք յայտնեք են Օրթոթոքութիւնը ընդունիլ, կարծելով որ այս հաւատաւորութիւնը պատճառ պիտի ըլլայ որ Չարին կառավարութիւնը զիրենց պաշտպանէ:

Այս լուրը վերապահութեամբ կուտանք, աւելի ստույգ տեղեկութիւններու ապահով:

—Ազգային Առաջնորդարանը տեսնելով որ կարգաւոր Պարբիէ Զինճիրճեանը չանօրէր կողմէ զրկուած աղաբարութեան և հրաւերին, շաբաթ օր պաշտօնագրով մը քաղաքիս կառավարիչէն խնդրած է այդ անուշայ բաշանան եկեղեցի զրկել ոստիկանութեան ձեռք պէտք եղածը տնօրինելու համար:

Այդ գիմումին արդիւնքը անձանթ է մեզ մինչև այս վայրկեանիս, սակայն երէկ նշմարեցինք այդ «եւրոպացի» (‘‘‘) քահանան, նորեղուկ և ծիծաղելի գտակով մը ինչ որ կ'աւելցնէ ժողովրդեան զգուշանքը և անգամ մը ևս կը սաստէ ժամ առաջ այդ զայնթաղութեան վերջ մը գնելու պէտքը:

Ինձի կարծիքդ. քու խորհուրդներովդ համաձայն պիտի վարուիմ. մանաւանդ, մի՛ մոռնար փոքրիկ քոյրերին, անոնց հայրն ևս դուն, ինչպէս որ ես ալ անոնց մայրն եմ որ կը պաշտեմ զանոնք և որ ամեն տառապանք պիտի կրէի անոնց և քու երջանկութեանդ համար:

«Միտա բարով, Մարտի, կը համարեմ քեզ և եմ անձնուէր քոյրդ:

«ԺԵՐՄԷՆ»

ԳԼՈՒԽ 2.

Կրկնասանդուղին ստորոտը կանգուն՝ Սթա Ապուհա կը գիտէր վար գրած սրահակը:

—Ահա ըմբատ, օրիորդ, ըսաւ զուարթօրէն:

Ժերմէն ելաւ սեղանին առջեւն ուր գիրքերու և տետրակներու կոյտ մը նետուած էր, անդին հրեց իր ամբողջ և ֆլեյա՛հ աղջկան քով եկաւ:

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ն. Վ. Պօլսէն փաշա և ընտանիքը Նոյեմբեր 7ին ճամբայ պիտի ելլեն Մարտի լիայէն դէպի Աղեքսանդրիա:

—Ն. Վ. Կարապետ պէ՛յ Ռեզեան, խորհրդական խառն Դատարաններու վրձնարիկ ատենին, անձնական գործերու համար Գահիրէ եկաւ շաբաթ օր և երկու օր հոս անցնելէ վերջ, այս առաւօտ Աղեքսանդրիա մեկնեցաւ:

—ԱՆԱՀԻՏ ազգային, գրական և գեղարուեստական հանդէսը, որ այնքան ախորժանօք կը կարգացուի ճշմարիտ գրաւորներու կողմէ և որ լաւագոյններէն մէկն է Արտասահմանի մէջ հրատարակող մեր պարբերականներուն, վերջերս իր Գահիրէի գործակալութիւնը յանձնած է քաղաքիս մէջ ծանօթ երեստաարդներէն Տիար Արշակ Թորգոմեանի, որ գեղեցիկ անձնութիւնութեամբ մը, յանձն առած է այդ պաշտօնը օգտակար ըլլալու համար Անանիսի տաղանդաւոր իմքագրապետ Տիար Արշակ Չօպանեանի:

Այս առթիւ մեզ համար պարտականութիւն մը կը համարինք յանձնարարել «Անահիտ»ի բաժանորդներուն որ փութան իրենց բաժանորդագիրը հասցնել Տ. Արշակ Թորգոմեանի, որ իր անձնական աշխատութիւններուն բերմամբ չի կրնար անձամբ վազել զանձումներու ետեւ:

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱՅԽԱՐԿԵՆ

ԷՏՈՒԱՐԴ Է. ԱՐԲԱՆ.— Լոստոնցի բազմաթիւ վաճառականներ մեծկակ գումարներ գրաւի դրած են Էտուարդ Է. արքային թագաւորութեան հանդէսին համար: Եթէ թագաւորը ապրի գրաւ բոնդները դրամ պիտի կորզեն, բայց եթէ մեռնի ահագին կորուստներ պիտի ունենան: Արդ Էտուարդ Է. վերջերս հիւանդացաւ, և թէ պէտ և ունեցած անհանգստութիւնը թեթեւ էր, սակայն լոստոնցի վաճառականները ահա ուղղի մէջ ձգեց: Այս վերջինները դիմեցին այն ատեն ապահովագրական ընկերութիւններու և թագաւորին կեանքը ապահովագրեցին: Ըստ Տէյլի Բրօնթի իրենց մէ պահանջուած տարեկան սակն է հարկը ռոկիի համար տասն ու կէս օսկի:

ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ի ՊԱՐՄԱՍՏՏԱՆ.— Սէն Բէթթսպուրի պաշտօնական շրջանակներուն մէջ Պարսկաստանի մէջ յեղափոխական շարժման մը զգուծեան մասին տարածուած լուրերը անհիմն կը նը-

—Շատ աղուոր է, այնպէս չ'ըսաւ այս վերջինը:

—Շատ աղուոր... շատ ճաշակ ունիս, Սթա Ապուհա, ես ըլլայի՛ տակ աւելի աղէկը չ'պիտի շինէի:

—Ուրեմն տիրուհիս գո՛հ է, հարցուց աղջկը:

—Տիրուհի՛դ... ատ ինչ խօսք է... բարեկամուհիդ չեմ միթէ:

—Բարեկամուհի՛ս, արտաբերեց Սթա Ապուհա լրջօրէն. այո, բարեկամուհիս էք, քոյրս... այլ հանումս ալ էք, այսինքն ինչ որ ամենէն աղէկն է, ամենէն վեհը, ամենէն գեղեցիկը. իսկ ես, ձեր աղախինն եմ որ բնաւ երբեք բաւական անձնուէր, բնաւ երբեք բաւական հնազանդ չեմ՝ փոխաբէն ձեր ինձի ըրած բարիքին, փոխաբէն եմ վրաս ձեր ունեցած սիրոյն:

Դուք դեռ չեկած, օրիորդ, հոգի չունեցող փոքրիկ կնիքանի պէս բան մըն էի,

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷՆԵՐՈՒ

ԳԱՀԻԹԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԵԻԹԻՑԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԹԻՑԷԻ ՇԷՆԲԸ

կատուին: Կըսուի թէ ոչ մէկ տեղ խողովո-
թին ծագած է և ժողովուրդը աւելի հա-
զարտ է քան երբէք շնորհիլ զանապիւն բա-
րեկիսութիւններուն զորս Շահը իրազորեց
էր ընդդէմ վերադառնալէն ի վեր:

Շահը յաճախ իր գոհունակութիւնը յայտ-
նած է մեծ եպարզութիւն հանրային զործոց
տուած ուղղութեան համար, այնպէս որ
կառավարութեան մէջ փոփոխման սպասելու
տեղ չի պիտի մնայ:

ԱՅՈՒՄԻԱՍՏԱՆ.— Լօրտ Բըրդն ծա-
նոյց Աֆղանիստանի նոր Էմիրին թէ Անգ-
լիա զինքը Աֆղանիստանի Էմիր կը ճանչ-
նայ և այս առթիւ կայոր-արքային բարե-
մաղթութիւններն ու ցաւակցութիւններն
զընկեց անոր:

Տէղի թէ չէ կրաւրի Սէն Բէթըրսպուր-
կի թղթակիցը կը հաւատէ սր պաշտօնա-
կան շրջանակներու մէջ ընթերցելու կը խօսուի
երկաթուղիի նոր գծի մը շինութեան մա-
սին որ Եւրոպան Հարաւային Ռուսիոյ հետ
հաղորդակցութեան մէջ պիտի դնէ:

ԳՈՐԾԱՐՈՒՆԵՐՆ Ի ՖՐԱՆՍԱ.— Յը-
րանսական կառավարութիւնը շատ մտադ-
բաղ կը թուի Մօսկոյ Լէ Միւնի և Սէնթ Է-
թիէնի գործադուլներուն մասին: Բազմաթիւ
հրացաններ և ռիվոլվերներ ցրուեցան զոր-
ծաւորներուն որոնք թէպէտ և չեն կրնար վըս-
տահիլ անպիտանի և պէտքեացի բանաւոր-
ներուն համբաշխութեան վրայ, բայց Նոյեմ-
բերի 15-ը ընդհանուր գործադուլ պիտի հրա-
տարակեն:

Եթէ այս գործադուլը տեղի ունենայ բա-
ցարձակապէս խողովարական նկարագիր
մը պիտի ունենայ և կառավարութիւնը չի
պիտի կրնայ զայն արգիլել նոյն իսկ եթէ
ընկերութիւնները կամը յայտնեն գործաւոր-
ներուն պահանջումներուն ենթակուել: Իրօք
բանաւորները կը պահանջեն որ օրական ա-
թը ժամ միայն աշխատին, կէս օրուան հա-
գիտան հաշուելով, զինքուծիւն մը որ աշ-
միկ օտար երկրի մէջ եղած է:

Հանրային այլ և այլ կեդրոնները գրա-
ւոր զօրքերը հրամանի կապան շարժելու
համար: Ամեն իրիկուն գործաւորները ժո-
ղովներ կուենան, որոնք իստահութիւն
չեն ներշնչէր:

ՌՈՒՄԻԱ ԵՒ ԱՅՈՒՄԻԱՍՏԱՆ.— Բե-
պերսպուրկէն չորեքշաբթի օրուան թու-
ականութիւնը կը հեռագրեն թէ Ռուսիոյ մայրա-
քաղաքին պաշտօնական շրջանակներուն մէջ
մեծ գոհունակութիւն կը տիրէ Աֆղանիս-
տանի մէջ մինչև հիմա կատարեալ անգոր-
ծութիւն տիրելուն համար: Պատճառը այն
է թէ Ռուսիա, որ կեդրոնական Ասիոյ այդ

երկրին զբաղին է, մի միայն կը փափաքէ
որ Աֆղանիստանի սահմանակից երկրներն
ուր մէջ ալ իր հակահարուածը ունենալիք
շփոթութիւններ չպատահեն: Ռուսիա Բա-
պուրի մէջ թէ և պիտի ազդեցական ներկայ-
ցուցիչ չունի, սակայն մեծ ուշադրութեամբ
պիտի հետեի Աֆղանիստանի մէջ կացու-
թեան բարեփոխմանը՝ Հապիպուլլահ խանի
օրով:

— Սիւրայէն չորեքշաբթի օրուան թուա-
կանութիւնը կը հեռագրեն թէ Հապիպուլլահ
խանի յայտարարութիւնը, որ Տաքքայի մէջ
կարգացուեց է, ծանուցեր է նաեւ թէ ժո-
ղովուրդին պետքը, իբրև հաւատարմութեան
նշան, իրեն յանձնած են վախճանեալ Է-
միրին սուրը, զօտին և այլն: Թայտարա-
ութիւնը կըսէ նաեւ թէ Հապիպուլլահ խան
որոշած է տուրքերը ու կառուածաւոր բերքը
թեթեւեղ և զինուորներուն թոշակները ա-
ւելցնել:

Ա Ջ Դ

Գայտեան վարժարանի Մանկապարտե-
ղին համար դաստիարակութիւն մը պէտք
կայ: Փափաքողները կը հրաւիրուին երթալ
բանակցիլ անօրէնութեան հետ վարժարանը
ամեն օր ժամը ութնէ մինչև կէս օր, կամ
կէս օրէ յետոյ մինչև չորս ու կէս:

Տ Ե Վ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խտիվին Գահիրէ վերադարձը առ-
նելու համար կազմուած Գանձնախումբ-
ին նախագահ, Ապտիլ Բատէր փաշա հան-
գանակութեան ցուցակ մը բացաւ 60 ոսկի
համար անձամբ արձանագրուելով:

Ահաւասիկ մինչև հիմա եղած հանգա-
նակութեան ցուցակը. Ապտիլ Բատէր 40
ֆիմաթ 40 ոսկի. — Հասան պէյ Պա-
քըր, 40 ոսկի. — Խալիլ պէյ Շահին, 40
ոսկի. — Մուհամմադ պէյ Թէլֆէր, Ապտիլ
Բատէր, 25. — Էլ-Սայիտ Էլ-Սաաթ, 20
ոսկի. — Կալիլի փաշա Ֆէհմի, 20
ոսկի. — Պ. Ռաֆ 15 ոսկի. — Պ. Սուա-
րէս, 15 ոսկի. — Մուսա Պէյ Բաթթալի
15 ոսկի. — Եուսուֆ Բաթթալի, 15 ոսկի.
— Էլ Բաճալի Պէյ, 15 ոսկի. — Ալի պէյ, Ֆէհ-
մի 10 ոսկի. — Պողոս փաշա Ղալի 10 ոսկի.
— Ելիլ Ալի Եուսուֆ 10 ոսկի. — Մուստաֆա
պէյ Բէմալ 10 ոսկի, — Խալիլաթ փաշա
Ֆէհմի 10 ոսկի: Գումար 482 անգլիական
ոսկի:

— Սուտանի դեր-կառավարիչ Ճաքսոն

փաշա Գահիրէ մեկնեցաւ Ն. Բ. Խտիվին
հանդիման ներկայացնելու ետքը՝ Նորին
Բարձրութեան Սուտանի մէջ կատարելիք
նախագործութեան առթիւ Սլոտար Վիկտոր
փաշայի պատրաստած ուղեցոյցը:

Ն. Բ. Խտիվը յիտաձգած է իր ճամ-
բորդութեան թուականը, փոխանակ 20 նա-
յնեքերի՝ 23 ին պիտի մեկնի Գահիրէն:
— Գրիգորիանիտեան ցուցահանգէսին բա-
ցումը վերջնականապէս տեղի պիտի ունե-
նայ յառաջիկայ նոյեմբեր 5 ին, Կէդիւրի
ցուցահանգէսներու պաշտօնին մէջ:

— Տեղական նոր դատարաններուն մէջ
պաշտօններ վարելու ստիպուած դատաւոր-
ները սաստիկ կը գանգատին իրենց յատ-
կացուած սրահներուն անպիտանութեանը
մասին: Նախ և առաջ բնաւ ապահով չեն
շէնքին հաստատութեանը մասին, այն օ-
րէն ի վեր որ իրենց յայտարարուեցաւ թէ
երկրորդ յարկը չի կրնար յատկացուիլ դե-
ւանագրքերու դատարանի որովհետև շատ
ծանր ճնշում մը կրնայ վստահաւոր ըլլալ:

Ուրիշ կողմէ՝ ունկնդրութեան սրահները
ձայնը պէտք եղածին պէս չեն տարածեր
և այն աստիճան գէշ բաժնուած են որ
ներքնագաւթիթին և մօտակայ սրահներու մէջ
եղած աղմուկը կը խափանէ փաստաբան-
ներուն ձայնը: Կը յիշեցնենք թէ դատա-
րանը 89000 ոսկիի նստաւ Պարտքի սըն-
տուկին և 20,000 ոսկիի Կառավարութեան:

— Այսօր Գահիրէի մէջ պիտի սկսին դե-
տեղի հեռաձայնական ընդգծեանայ թելե-
րը: Աղեքսանդրիոյ մէջ այս աշխատութիւն-
ները սկսած են արդէն քանի մը օրէ ի
վեր և արագօրէն առաջ կը տարուին: Խո-
ղովակները Անգլիայէն հասած են արդէն:

Հիմա պարաններուն կապան:

Զառնիկայ յունկարին աշխատութիւն-
ները ամբողջովին վերջացած պիտի ըլլան:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆՏՈՆ, 26 Հոկտ. — Գրոմէր կոմսն
ու կոմսուհին Պրինսիպի մեկնեցան:

ԲԱՐԻՉ, 27 Հոկտ. — Սոֆիայէն կիմա-
ցրեն «Ռաբլի» թէ Գարալիօֆ և Զան-
քով պատրաստած են եղեր պետական հա-
րած մը որուն նպատակը պիտի ըլլար
թագաւոր հոգեկեղծի տը Պաթթիմպերկ
իշխանը:

Ռուսիա խորհուրդ տուած է այդ ձեռ-
նարկէն ետ կենալ:

Կործանէր կ'անհետանար. բոլոր սիրտերը
իրեն յանդուգնութեան էին, կը ստանար ան-
փառելի հեղինակութիւն մը որ համբերու-
թեամբ և հեղաբարոյութեամբ ձեռք բե-
րած էր: Բայց այդ իշխանութիւնը պար-
ծնկոտ չէր ընել զինքը, առջի օրերուն
պէս մնացած էր համեստ, սորոպներուն
նկատմամբ ողորմած, հանրմին նկատմամբ
յարգալից, իր ազդեցութիւնը միայն իւրա-
քանչիւր բարեկէն և գոհունակութեամբ
համար բանեցնելով:

Բայց ան որուն վրայ այդ ազդեցութիւ-
նը ամենէն աւելի ներգործեց՝ փոքրիկ Սթա-
նկուհին եղաւ: — Ժերմէն ալ ազդեցական
մէջ գտած սերէն զգածուած, հաճոյք իմա-
ցած էր իր բարոյականին փոխարինելով
զանի անկէ ընդունած բոլոր բարեքին հա-
մար, անպայ ֆէլլաճ աղջիկը զրեթէ ուս-
եալ աղջիկ մը ըրած էր. զեղեցիկին զեռ
նիւրիւր բնագրը անոր մէջ արթնացած էր,
և անոր սրտին և բանականութեանը կոշտ
ընելով՝ կերպարանափոխ կ'ընէր այդ վայրե-

ՍԷՆՔԵԹԵՐՍՊՈՒՐԿ, 27 Հոկտ. —
Պաշտօնական կը հերքուի այն լուրը ըստ
որում Գորոքթիւնը զօրավարը հրամայե-
ր է զինուորական մէջ քանի միջոցներ ձեռք
առնել սահմանադրութիւն վրայ Աֆղանիստանի
կորին մահուան առթիւ:

ԲՐԱՏՐԻՏ, 27 Հոկտ. — Պ. Սակաս-
թայի առողջութիւնը անխնայ վիճակի մը
մէջ է: Հաւանօրէն մօտեւոյ մայրաքաղաքէն
պիտի մեկնի աւելի զաւր իլիմայ մը փըն-
տելու համար: Իր բացակայութեանը վէ-
լը զօրավարը պիտի ստանձնէ առաջին նա-
խարարի պաշտօնը:

Երկի իրիկուն խորհրդարանին մէջ ար-
տասանած ճառին մէջ, Վէլլէր զօրավարը
տեղեկագրութեան մասին մէկ քանի միջին
իմաստներ արտայայտեց որոնք մեծկալ տը-
պաւորութիւն մը բրին ունկնդրներուն վրայ:

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԵԹՈՒՂԹԻ

Աղեքսանդրիա, 28 Հոկտ.

Բրիւլլէթիէ	99 1/4
Իւնիֆիէ	108 1/2
Տայիբա Սանիյէ	102 /—
Տօմանեալ	105 /—
Թրքական Բոնաօլիտէ, սեռի Ը	23 30
Րուսիէի Երկաթուղի	Ֆր. 100 /—
Բանալ տը Սիւէզ	» 3656 /—
Բանալ տը Սիւէզ օպիկ.	» 645 /—
Նաշ, պանք օֆ Էնթրօթ Ա. Ռ.	11 1/8
Աղէքս. Թրամվէյ (բրիւլլէթ)	Ֆր. 49 /—
Աղէքսանդրիոյ Թրամվէյ	» 26 1/2
(աքիօս տիվիտանտ)	» 554 /—
Բրէտի ֆօնսիէ եգ. աքիօս	» 263 1/2
Բրէտի ֆօնսիէ 3 0/0	» 630 /—
Ջրի Ընկ. Գահիրէ	» 35 3/4
» Աղէքսանդրիա Ա. Ռ.	» 12 /—
» Թանթա	» 48 /—
Պէհէրայի անանուէն ընկ.	» 100 /—
Ինթըրն. մարքէթ օպի. 50/0	» 0. 15. 9
» » աքիօս	» 0. 15. 6
» սոյթ ընտ սօսա	» 4. 1/4
» սոյթ ընտ սօսա	» 4. 1/4

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻԹ

ՔՕՆԳՐԱ

Աղեքսանդրիա, 28 Հոկտ.

Բամպակ. Նոյ. Թալը.	9 31/32 /—
» Եուսուֆ.	» 9 31/32 /—
» Մալու	» 10 1/32 /—
Պիզիէ. Նոյ. Դեկ. Եուս.	» 61 34/40 /—
» փետ. մարտ	» 63 1/2 /—
Բակլա. սեպ. հոկտ.	» 91 20/40 /—
» Նոյ. դեկ. յվ.	» 92 3/4 /—

նի բնութիւնը ու իր մակարդակին կը բարձ-
րացնէր զանի:

Եւ ինչ որ Սթա Սպուհին ալ աւելի
զմայրելի կ'ընէր՝ անոր նկարագրին իսկա-
տիպութիւնը, անոր կերպերուն աշխուժու-
թիւնն էր զոր բաղադրակցութիւնը չէր փոխած
բնաւ և որ անոր արարքներուն կոտորու-
թիւնն անանկին զբաւ մը, եղական կեր-
պարանք մը որ շատ վայելուչ էր տարօ-
րեակ և նուրբ այդ փոքրիկ էակին:

Փաշան փափաք յայտնած էր որ դա-
ւանները և իրենց գաստիարակութիւն եւրո-
պական ձեւով կա հա: Գործած տեղ բնակէին.
և ինքը անձամբ ներգութիւնը ստացած էր
տեղական պաշարներուն և եւրոպական վա-
ճառանոցներուն մէջէն երթալ ընտրելու ինչ
որ պալատին մէջ անոնց յատկացուցած
յարկաբաժինը զարգացելու և գեղեցիկացնելու
համար յարմարագոյն և արխանաւորագոյն
երեցած էր իրեն:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՆԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱՌԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԻՆ ԶԱՊԹԻՅԷԻ ԵՒ ՔԷՆԳԻՆ ԴԷՄ

Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՆԻՒ-ԵՈՐԻԻ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԱՑ 1843 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻՍՈ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կարելի դրուբիւնները կը զո ծագրէ. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրուբիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԺԻՇ, Ընդհ. ներկայադրուցիչք:
Աղեքանդորիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալտար: Գ. ԵԿԱՆՈՅ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԲ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ 8 ԵԿԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԼԻԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'առանձնէ ամեն տեսակ անգանաւորական դործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր առանգներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կատարուող չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւ ամսով մուրհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԽԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԽԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերէա, Իզմիր, Միտլի և Կ. Պոլիս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքանդորիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'առնեն շոգենաւները Բերէա հանգիստը, Աթէնք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մերսին և Իսկէնտէրուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքանդորիա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին:

Ճամբորդները անգամ մը երթեկեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՍԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Աղեք. ոանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Քուքի ամեն մասնաճիւղերուն:

1—1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՑՈՒՆ ԺԱՄԱՆՈՅՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԷՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսթի փողոց,

Օ. և Ս. Սիսնաւիի վաճառատան դէմը

Ապրանայ զանազանութիւն

Երաշխատութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Շնոկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:

ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՍՆԱՔ

ԱՐՄԱԹ

ՊԵՏԱԼ

ԲԱՐԻՉ

1900



ՊԵՏԱԼ

ԱՐՄԱԹ

ԱՐԱՆՑ

ԿԻՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՁԻ ՆՈՐԱՅԵՒՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՑՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով

25 Յունվար 1898

Դրամազուլուս Մեզլ. ոսկի 1,500,000

Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էյվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ: Մասնաճիւղեր.

Աղեքանդորիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանգներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեզանաւորական գործողութիւններ.

ԴԺՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱՄԱՐՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլի հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փախում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգուղեղէն մէյլէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աւբուլային գեղերու նման չի խանդարեր ստամբուլը:

Կը ծախուի ամեն մեծ դեղարաններու մէջ:

9—316

ԼՈՒՍԱՆԻԱՐՉԱՏՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ

ՓՈՒՄԴՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռուքներ և ակրան-սիւրմուշներ:

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դիւրաւ մատչելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՇԱԿ

ԳԻՆԵՐՈՒ ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆՇԸԼ ԵՒ ՍԻՄՕՆՍ

Հաստատեալ յամին 1860

ՎԱՅԱԳՈՐԾԷ-ՎԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուլին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսքիւներ, և բէյքեր:

Այս փուլին մասնաւոր կառքեր կը շրջադալին Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հէյվան:

Թէվֆիգիյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէվէֆօն թիւ 504.